Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
մայիսի 16-ի նիստի N 19
արձանագրային որոշման

Ֆինանսական համաձայնագիր
2013

Գերմանիայի վերակառուցման և զարգացման բանկի, Մայնի Ֆրանկֆուրտ

("KfW")

և

Հայաստանի Հանրապետության

Ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության

(Ստացող կողմ)

և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության

(Ծրագիրն իրականացնող գրասենյակ)

Միջև

մինչև 820.000 եվրո

«Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի» ծրագրի շրջանակներում Ստացող կողմին մատուցվելիք փորձագիտական ծառայությունների համար՝ ֆինանսավորվող Գերմանիայի կառավարության կողմից տրամադրված հատուկ հիմնադրամից (Studien- und Beratungsfonds):

Սույն ֆինանսավորման համաձայնագրի կնքման համար հիմք են հանդիսանում.

- ԳԴՀ կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 16.05.2008 թ. կնքված միջկառավարական համաձայնագիրը,

- Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի՝ 2012թ. նոյեմբերի 14-ի 15-ը կայացած նիստի արձանագրությունը,

- ԳԴՀ կառավարության և ՀՀ Կառավարության միջև կնքվելիք Ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը

- Գերմանական կառավարության 26.03.2013 թվականին տրված թույտվությունը և Ստացող կողմի խնդրանքը՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (Ծրագրի իրականացման գրասենյակ):

Ստացողը և KfW սույնով կնքում են հետևյալ ֆինանսավորման համաձայնագիրը:

Հոդված 1

Ֆինանսական օժանդակության գումարը և նպատակը

1.1 KfW-ն Ստացող կողմին կտրամադրի մինչև 820,000 եվրոյի ֆինանսական օժանդակություն:

Սույն ֆինանսական օժանդակությունը ենթակա չէ հետ վերադարձման, բացառությամբ հոդված 3.2-ում սահմանված դեպքերի:

1.2 Ստացող կողմը՝ ի դեմս Ծրագրի իրականացման գրասենյակի պարտավոր է ֆինանսական օժանդակությունն օգտագործել բացառապես հետևյալ փորձագիտական ծառայությունների ֆինանսավորման նպատակով.

Իրականացնել «Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի» նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ, շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում և աջակցել մրցութային գործակալին սույն ֆինանսական համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն: Ստացողը, որին ներկայացնում է Ծրագրի իրականացման գրասենյակը և KfW բանկը, պետք է համատեղ սահմանեն Փորձագիտական Ծառայությունների մանրամասները, որոնք պետք է ֆինանսավորվեն ֆինանսական օժանդակությունից համաձայն Ծառայությունների պայմանագրի և տեխնիկական առաջադրանքի:

1.3 Ստացողի կողմի ծագած հարկերը և այլ պետական տուրքերը, ինչպես նաև ներմուծման տուրքերը չպետք է ֆինանսավորվեն սույն ֆինանսական օժանդակության միջոցներից:

Հոդված 2

Հատկացումներ

2.1 Ստացող կողմը սույնով լիազորում է KfW-ին սույն ֆինանսական օժանդակության միջոցներից միջանկյալ և վերջնական վճարումներ կատարել խորհրդատուին և մրցութային գործակալին: Այդ վճարումները պետք է կատարվեն մատուցված փորձագիտական ծառայությունների ընթացքին համաձայն՝ KfW-ին ներկայացրած հաշիվ-ապրանքագրերի բնօրինակների հիման վրա (կրկնօրինակը՝ Ստացողին) և համաձայն կնքված պայմանագրերի՝ համապատասխանաբար Ստացող կողմի և խորհրդատուի միջև և Ստացողի ու մրցութային գործակալի միջև: Ստացող կողմի տրամադրած սույն լիազորագիրը կհամարվի խնդրագիր՝ վերոնշյալ բոլոր վճարումների կատարման համար:

2.2 Այլ արտարժույթով կատարված վճարումների դեպքում (“Արտարժույթ”), KfW-ն Ստացողի ծախսը կհաշվարկի եվրոյով, ինչպես որ այն արտարժույթի գնման համար տրամադրվել էր KfW-ի կողմից՝ ներառյալ այլ լրացուցիչ ծախսերը:

2.3 KfW-ն պատասխանատվություն չի կրում , եթե KfW-ի կողմից կատարվող որևէ վճարում ուշացվել է բանկային հաստատությունների հատկացումների կամ փոխանցումների ուշացման պատճառով: Եթե ուշացումը տեղի է ունեցել KfW-ի մեղքով, ապա KfW-ն պարտավոր է վճարել միայն հաշվեգրված տոկոսները:

2.4 KfW-ն իրավունք ունի հրաժարվել հատկացումներ կատարելուց 2013թ-ի դեկտեմբերից հետո:

2.5 Խորհրդատուների և մրցութային գործակալի պայմանագրում պետք է ներառվի մի դրույթ, համաձայն որի Ստացողի հաշվին փոխանցվող ցանկացած վճարում, երաշխիք կամ նման վճար, ինչպես նաև ցանկացած ապահովագրական վճար պետք է կատարվի KfW-ի հետևյալ հաշվեհամարին՝ 38 000 000 00 (IBAN: DE53 5002 0400 3800 0000 00), Մայնի Ֆրանկֆուրտ (BIC: KFWIDEFF; BLZ 500 204 00), որտեղից էլ KfW-ն սույն վճարումները կփոխանցի Ստացողի հաշվին:

Հոդված 3

Հետվճարումների և հատկացումների կասեցում

3.1 KfW-ն կարող է կասեցնել վճարումները միայն այն դեպքում, եթե

ա) Ստացող կողմը չի կատարում KfW-ի հանդեպ ունեցած իր պարտավորությունները ժամանակին վճարումներ կատարելու առումով,

բ) խախտվել են սույն համաձայնագրով նախատեսված պարտականությունները,

գ) Ստացող կողմը չի կարող ապացուցել, որ հատկացված գումարները ծախսվել են նպատակայնորեն,

դ) ի հայտ են եկել արտակարգ հանգամանքներ, որոնք խանգարում կամ լրջորեն վտանգում են փորձագիտական ծառայությունների նպատակի իրականացումը,

ե) խախտվել, դադարեցվել կամ չեղյալ է համարվել Ստացողի և Խորհրդատուի միջև կնքվելիք խորհրդատվական պայմանագիրը:

3.2 Եթե առկա է հոդված 3.1-ի բ) կամ գ) կետերում նշված որևէ իրավիճակ և այն չի շտկվել KfW-ի կողմից սահմանված ժամանակահատվածում, որը,այնուամենայնիվ, կլինի առնվազն 30 օր, ապա KfW-ն իրավունք ունի պահանջել անհապաղ հետ վերադարձնել ֆինանսական օժանդակությունը: Հոդված 3.1-ի գ) կետի պարագայում KfW-ն կարող է պահանջել, որպեսզի Ստացողը հետ վերադարձնի այն գումարները, որոնց նպատակային ծախսումը չի կարող ապացուցել:

Հոդված 4

Ծախսեր և պետական տուրքեր

Ստացողը պարտավոր է վճարել սույն համաձայնագրի կնքման ու կատարման հետ առնչվող բոլոր հարկերը և պետական տուրքերը, որոնք կգոյանան Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դուրս իրական պայմանագրի կնքման ու իրագործման շրջանակներում, ինչպես նաև սույն ֆինանսական օժանդակության հատկացման հետ կապված գումարի փոխանցման և փոխանակման բոլոր ծախսերը:

Հոդված 5

Պայմանագրային դրույթներ և ներկայացուցչական իրավունք

5.1 ՀՀ ֆինանսների նախարարը և նրա կողմից KfW-ում նշանակված անձինք, ովքեր լիազորված են նրա կողմից վավերացված ստորագրության նմուշներով, կներկայացնեն Ստացողին սույն համաձայնագրի կնքման ընթացքում: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը և իր կողմից KfW-ում նշանակված անձինք կներկայացնեն Ստացողին սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում: Ներկայացուցչական իրավունքներն ուժի մեջ կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ KfW-ն չի ստացել այդ իրավունքի դադարեցման մասին ծանուցում Ստացողի կամ համապատասխան լիազորում ունեցող անձի կողմից:

5.2 Սույն համաձայնագրի փոփոխությունները կամ լրացումները՝ և սույն Համաձայնագրի ներքո պայմանագրի կողմերի կողմից տրվող ցանկացած ծանուցում և հայտարարություն պետք է ներկայացվեն գրավոր: Ծանուցումները և հայտարարությունները համարվում են ստացված, եթե հասել են կողմերի ներքոնշյալ հասցեներին կամ մեկ այլ հասցեի, որի մասին այլ կողմին ծանուցվել է:

KfW-ի համար KfW
ԼԵ դ 3, Էներգետիկայի և
բնական պաշարների բաժին
Պալմենգարդեն փող. 5-9
60325 Մայնի Ֆրանկֆուրտ
Գերմանիայի Դաշնային
Հանրապետություն
Ֆաքս՝ +49 69 7431-2547

Ստացող՝ ՀՀ ֆինանսների նախարարություն
Մելիք Ադամյան 1
0010 Երևան
Հայաստանի Հանրապետություն
Ֆաքս՝ + 374 10 524282

Ստացող (Ծրագրերի իրականացման գործակալություն)՝
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարություն,
Հանրապետության հրապարակ,
Կառավարության տուն 2 Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն
Ֆաքս՝ +374 10 526365

Հոդված 6

Փորձագիտական ծառայությունները

6.1 Ստացողը պարտավոր է

ա)Փորձագիտական ծառայությունների իրականացումը հանձնարարել անկախ որակավորված խորհրդատուներին («Խորհրդատու»)՝ Ստացողի և KfW-ի միջև համաձայնեցված փորձագիտական ծառայությունների հայեցակարգի բովանդակության համաձայն:
բ) 1) Կնքել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության պայմանագիր /Փուլ 1-ի համար, ինչպես նշված է Հոդված 7.1-ում/, որն անմիջականորեն կֆինանսավորվի ֆինանսական օժանդակության միջոցներով և հայտատուին պարտավորեցնել հայտի հետ միասին ներկայացնել նաև ձեռնարկվելիք աշխատանքների հայտարարագիր (Հավելված 1, էջ 16):
Այս առումով կարճ ժամանակահատվածում KfW-ին պետք է ներկայացնի Պայմանագրի նախագիծը, ընտրված փորձագետների որակավորման փաստաթղթերը և KfW-ի կողմից պահանջվելիք այս փաստաթղթերին համապատասխան:
Եթե այլ բան համաձայնեցված է KfW-ի կողմից

2) նախնական ընտրությունից և միջազգային հանրային մրցույթից հետո պայմանագիր կնքել անկախ, որակավորված խորհրդատուի հետ՝ շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման համար (Փուլ 2, Հոդված 7.1): Պայմանագիրը կնքելիս պետք է առաջնորդվել “Զարգացող երկրների հետ ֆինանսական համագործակցության շրջանակում խորհրդատուների նշանակման ուղեցույցով” (Հավելված 1), որը սույն համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում,

գ) ապահովել փորձագիտական ծառայությունների լիարժեք ֆինանսավորում, և KfW-ի պահանջով KfW-ին տրամադրել ապացույց առ այն, որ սույն ֆինանսական օժանդակության կողմից չփոխհատուցվող ծախսերը կատարվել են,

դ) կատարել խորհրդատվական ծառայությունների մատուցման և մրցութային գործակալի պայմանագրերով սահմանված իր պարտականությունները,

ե) պահել կամ պահանջել, որպեսզի պահվեն գրանցամատյաններ և գրանցումներ, որոնք պարզորոշ ցույց կտան ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ հստակորեն տարանջատելով սույն ֆինանսական օժանդակության միջոցներով ֆինանսավորվող ծառայությունները,

զ) հնարավորություն տալ KfW-ի ներկայացուցիչներին ցանկացած ժամանակ ստուգել վերոհիշյալ գրանցամատյանները, գրանցումները և փորձագիտական ծառայությունների իրականացմանն առնչվող ցանկացած փաստաթուղթ,

է) KfW-ի պահանջով՝ KfW-ին տրամադրել փորձագիտական ծառայություններին կամ նրանց հետագա ընթացքին առնչվող ցանկացած տեղեկատվություն և հաշվետվություններ,

ը) սեփական նախաձեռնությամբ անմիջապես տեղեկացնել KfW-ին, եթե որևէ հանգամանք խոչընդոտի կամ լրջորեն վտանգի փորձագիտական ծառայությունների իրականացումը կամ նպատակը,

թ) խորհրդատուի հաշվետվությունների վերաբերյալ նկատառումներ ներկայացնել կամ ընդունել դրանց՝ ստորագրությամբ հաստատելով

ժ) որոշումներ կայացնել բոլոր գծագրերի, հաշվետվությունների, ուսումնասիրությունների, ինչպես նաև խորհրդատուների անձնակազմում փոփոխությունների վերաբերյալ՝ համաձայնեցնելով դրանք KfW-ի հետ:

6.2 Փորձագիտական ծառայությունների ավարտից անմիջապես հետո KfW-ի պահանջով KfW-ին տրամադրել խորհրդատուների կազմած բոլոր գծագրերի, հաշվետվությունների, ուսումնասիրությունների այնքան կրկնօրինակներ, որքան KfW-ն կարող է պահանջել: KfW-ն կարող է տալ վերոնշյալ ուսումնասիրությունների գնահատականը:

6.3 Ուսումնասիրության ծառայության ֆինանսավորումից չի բխում, որ Ստացող կողմին վերապահվում է ուսումնասիրության արդյունքում մշակված ծրագրի

ֆինանսավորում ստանալու իրավունք: Ստացողը, այնուամենայնիվ, պարտավոր է Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը թողնել Ֆինանսական համագործակցության ներքո ֆինանսավորման ընտրության հարցը:

Հոդված 7

<u>Խորհրդատվական ծառայություններ</u>

7.1 Ի թիվս այլոց, խորհրդատուի պարտականությունները ներառում են՝

Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության համար (Փուլ 1-ին)

-Մանրամասն տեխնիկական նախագիծ,

- Տնտեսական գնահատում,

- Զգայունության վերլուծություն և,

- Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի որոշում:

Երեք տեխնիկական տարբերակներ կընտրվեն նախատեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունից:
Հավելյալ տեղեկությունները տե'ս Հավելված 2 ա) տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության օրենքներ
Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն (Փուլ 2)
Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության ընդունելի տարբերակի վրա հիմնված մանրամասն գնահատում (տես Հավելված 2բ)ՇՄՍԱԳ –ն տեխնիկական առաջադրանք):

7.2 KfW-ն լիազորված է անսահմանափակ իրավունքով և իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում կարող է օգտագործել փորձագիտական ծառայությունների արդյունքները և բոլոր հարակից փաստաթղթերը, որոնք ֆիանասավորվել են սույն ֆինանսական օժանդակության միջոցներով:

Հոդված 8

Այլ դրույթներ

8.1 Ստացողը պարտավոր է երաշխավորել, որ փորձագիտական ծառայությունների իրականացման համար պատասխանատու անձինք չեն պահանջի, թույլ չեն տա, չեն վճարի, չեն տա, չեն խոստանա կամ ընդունի ապօրինի վճարումներ կամ այլ շահ՝ սույն փորձագիտական ծառայությունների որևէ պայմանագրի շնորհման և սույն ֆինանսական օժանդակության միջոցներից կատարված հատկացումների առնչությամբ:

8.2 Սույն համաձայնագրի դրույթներից որևէ մեկի անվավեր դառնալը չի անդրադառնա մնացած դրույթների վրա: Դրա պատճառով առաջացած բացը կլրացվի սույն համաձայնագրի նպատակին համապատասխան այլ դրույթով:

8.3 Ստացողը չի կարող նշանակել կամ փոխանցել կամ գրավադնել սույն համաձայնագրով նախատեսված որևէ իրավունք:

8.4 Սույն համաձայնագիրը կարգավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ: Կատարման վայրը Մայնի Ֆրանկֆուրտն է:

8.5 Սույն Համաձայնագրով սահմանված՝ KfW–ի և Ստացող կողմի միջև իրավական հարաբերությունները կդադարեն վերջին հատկացումից 6 տարի հետո:

Հոդված 9

Գործակալության պայմանագիր

9.1 Ստացողի պահանջով KfW-ն Փուլ 2-ի համար նշանակում է փորձագետ (Մրցութային գործակալ) եթե այլ բան համաձայնեցված չէ KfW-ի հետ, և նրա լիազորությամբ KfW-ն Մրցութային գործակալի հետ կնքում է պայմանագիր Ստացողի անունից:

9.2 Մրցութային գործակալը կաջակցի Ստացողին 6.1-ի բ/կետով նախատեսված Խորհրդատուի ընտրության գործընթացում:

Այդ գործընթացները հետևյալն են՝

ա) Մրցութային գործակալը պետք է ապահովի, որ Խորհրդատուի կողմից կատարվելիք ծառայությունների համար Ստացողի կողմից ներկայացվելիք տեխնիկական առաջադրանքները փոփոխվեն և նախագծվեն ըստ անհրաժեշտության:

բ) Մրցութային գործակալը կկատարի 6.1 հոդվածի բ/ կետով նախատեսված գործընթացը՝ ստացողի անունից Խորհրդատու ընտրելը, և Ստացողի ու KfW-ի հաստատմանը կներկայացնի հետևյալ առաջարկությունները՝

- Միջազգային մրցութային հայտարարության ընդունելի լինելու դեպքում անհրաժեշտ նախաորակավորման նախագիծ և շահագրգիռ խորհրդատուների համար այլ հավելյալ տեղեկատվություն
- Միջազգային մրցութային հայտարարության ընդունելի լինելու դեպքում անհրաժեշտ գնահատման զեկույց և նախնական ընտրված հայտատուների ցանկ
- Մրցույթի ընթացքի համար փաստաթղթերի նախագիծ
- Տեխնիկական հայտերի վերաբերյալ գնահատման զեկույց, որը պետք է նաև նշի հայտերի որակազրկման պատճառները
- Անհրաժեշտության դեպքում՝ հիմնավորված չեղյալ հայտարարման առաջարկ, որը պետք է դիտարկի չեղյալ հայտարարման չափանիշները, ինչպես նշված է կից ներկայացված հավելված 1-ի ուղեցույցում:
- Ֆինանսական հայտերի վերաբերյալ գնահատման ելույթը՝ շնորհման առաջարկով:

- Նախքան երկրորդ տեղ զբաղեցրած հայտատուի հետ պայմանագրային բանակցություններ սկսելը, անհրաժեշտ է այս հայտատուի հետ պայմանագրային բանակցություններ սկսելու առաջարկ. առաջարկը պետք է նշի այն հիմքերը, համաձայն որոնց, առաջին տեղ զբաղեցրած հայտատուի հետ բանակցությունները ձախողվել են:
- Նախքան որևէ որոշում կայացնելը կան որևէ կադրային փոփոխություն կատարելը՝ ընտրված խորհրդատուի առաջարկով. Խորհրդատուի առաջարկը, վերագնահատման արդյունքում խորհրդատուի հայտ և հիմնավորված մեկնաբանություններն այս առաջարկին:
- Պայմանագրի բանակցությունների արդյունքը և բանակցված խորհրդատվական պայմանագիրը, որում կնշվի կադրային ցանկացած փոփոխություն և տեխնիկական առաջադրանի պայմանների ցանկացած փոփոխություն:

գ) Ստացողը 2-3 շաբաթվա ընթացքում կուղարկի իր մեկնաբանությունները մրցութային գործակալին 9.2(բ) հոդվածի առաջարկները ստանալուց հետո: Մինչև ժամկետի ավարտը մրցութային գործակալին նման մեկնաբանություններ տալու անհնարինության դեպքում այն կդիտվի որպես համաձայնեցում Ստացողի կողմից: Մրցութային գործակալը առանց հապաղելու արդյունքների մասին կտեղեկացնի Ստացողին մրցութային կարգով:

9.3 Ստացողը լիազորում է KFW-ին կնքել խորհրդատվական պայմանագիր Ստացողի անունից: Հետևելով պայմանագրի կնքմանը KFW-ն Ստացողին կտրամադրի սույնի բնօրինակը:

9.4 KFW-ն չի կրում պատասխանատվություն խորհրդատուի, մրցութային գործակալի և նրանց ներկայացուցիչների կողմից թույլ տված անփութության համար:

Կազմված է 3 բնօրինակով՝ անգլերեն լեզվով

Մայնի Ֆրանկֆուրտ	Երևան	Երևան
____ 2013 թ.	____ 2013 թ.	____ 2013 թ.
_____	_____	_____
KfW, Գերմանիայի Վերակառուցման և զարգացման բանկ	Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության

Հավելված 1 Զարգացող երկրների հետ ֆինանսական համագործակցության ներքո խորհրդատուների նշանակման ուղեցույց

Հավելված 2ա Տեխնիկատնտեսական հիմնավորման տեխնիկական առաջադրանքներ

Հավելված 2բ Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության ուսումնասիրման տեխնիկական առաջադրանքներ (մշակվելու է մրցութային գործակալի կողմից)